ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՄՍՇՊՀ-ՄԱԱՊՁԲ-26/21

ք. Երևան «30» մարտ 2026թ.

Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Վահանյանի, որը գործում է հանձնաժողովի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Կոմուս>> ՍՊԸ-ն, դեմս տնօրեն Բաբկեն Սարգսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 182 458 (մեկ հարյուր ութսուներկու հազար չորս հարյուր հիսունութ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[1] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը

---

[1] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[2]

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[3] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

---

[2] *Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»*

[3] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[4]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները

---

[4] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Վաճառողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում գնորդը վճարումներն իրականացնելիս ապահովի վաճառողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում գնորդը պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է գնորդի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը[5]

8.13 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողով Հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծ 4 ՀՀ ՖՆ Կենտրոնական գանձապետարան գործառնական վարչություն Հ/Հ 900011566057 ՀՎՀՀ 01538354 Ա. Վահանյան ---------- /ստորագրություն/ Կ.Տ	«Կոմուս» ՍՊԸ ք. Երևան, Մ. Ավետիսյան 3, 2շ, բն. 7 «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ 1570032821248200 ՀՎՀՀ 01078629 Բ. Սարգսյան ---------- (ստորագրություն) Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

---

[5] *Եթե գնորդը հանդիսանում է գանձապետարանում հաշիվ չունեցող պատվիրատու, ապա սույն կետը խմբագրվում է՝«վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու» բառերը փոխարինելով «բանկին վճարման հանձնարարական տալու» բառերով:*

Հավելված N 1
«30» մայիսի 2026թ. կնքված
ՄՄՇՊՀ-ՄԱԱՊՁԲ-26/21 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	անվանումը և ապրանքային նշանը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը *	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր առավելագույն գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
								հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
2	Գրիչ գնդիկավոր	ցանկացած	Գնդիկավոր, տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքով, առնվազն 1մմ հաստությամբ ծայրով, փափուկ գրվող, հավելյալ թանաք չթողնող, բարձրորակ:	հատ	29	6496	224	Ք. Երևան Տիգրան Մեծի 4	224	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 15-ը:
3	Մատիտներ	ցանկացած	Մատիտ, գրաֆիտե միջուկով, փափուկ գրվող, ռետինով:	հատ	19	912	48		48	
4	Սրիչներ	ցանկացած	Գրասենյակային սրիչներ՝ գրաֆիտե մատիտների համար, մետաղական սուր սրիչով:	հատ	29	145	5		5	
5	Շտրիխ (վրձինով)	ցանկացած	Վրձինով, հեղուկ, տարողությունը մինչև 12մլ., նախատեսված տարբեր տեսակի թղթերի վրա տպագրված կամ գրիչով գրված տեքստերը սպիտակեցնելու համար:	հատ	99	1485	15		15	
6	Շտրիխ (ժապավենային)	ցանկացած	Ժապավենային, նախատեսված տարբեր տեսակի թղթերի վրա տպագրված կամ գրիչով գրված տեքստերը սպիտակեցնելու համար: ժապավենի լայնությունը մինչև 5մմ, երկարությունը առնվազն 10մ:	հատ	320	4800	15		15	
7	Սոսնձամատիտ, գրասենյակային	ցանկացած	Չոր սոսինձ, գրասենյակային (սոսնձամատիտ), նախատեսված թղթեր սոսնձելու համար, մինչև 15գ:	հատ	75	7500	100		100	
8	Գծանշիչ	ցանկացած	Տարբեր գույների, նախատեսված բոլոր տիպի թղթերի վրա տեքստը ընդգծելու, նշումներ կատարելու համար, ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից գրչածայրի ձևը շեղ, թանաքը ոչ թունավոր:	հատ	75	3450	46		46	

9	Էջաբաժանիչ	ցանկացած	Էջանիշեր, էջերն առանձնացնելու համար տարբեր գույների կպչուն սլաքներ, առնվազն 44մմ x 12մմ չափի, առնվազն 5 գույն, ամեն գույնից առնվազն 20 թերթիկներ (սլաքներ):	հատ	65	650	10		10	
11	Կարիչի մետաղալարե կապեր, փոքր	ցանկացած	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով առնվազն՝ 10 մմ/6 մմ:	տուփ	39	390	10		10	
12	Կարիչի մետաղալարե կապեր, միջին	ցանկացած	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով առնվազն՝ 24մմ/6 մմ, կամ առնվազն՝ 26մմ/6 մմ:	տուփ	78	780	10		10	
13	Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	ցանկացած	Թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, առնվազն 40 միկրոն, արագակարերին ամրացնելու հնարավորությամբ:	հատ	6	11400	1 900		1 900	
14	Թղթապանակ, արագակար, թղթյա	ցանկացած	Արագակար կավճած ստվարաթղթից մետաղական ամրակով, ստվարաթղթի խտությունը՝ 1,15 գ/սմ3, հաստությունը 0,3-ից մինչև 1,5 մմ, A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար:	հատ	79.8889	35950	450		450	
15	Թղթապանակ կոշտ կազմով	ցանկացած	Թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով, համապատասխան չափի կոնակով (ծավալով), մետաղյա ամրացման հարմարանքով, առնվազն 8 սմ հաստության, A4 (210x297) մմ ձևաչափի թղթերի ամրացման համար:	հատ	430	10320	24		24	
16	Թղթապանակ ամրակով	ցանկացած	Կոճակով ծրարի նման տարբեր գույների թղթապանակ, պատրաստված բարձրորակ կիսաթափանցիկ պլաստիկից՝ «հայելային» մակերեսի հյուսվածքով, որի վրա չեն երևում մատնահետքեր և մանր քերծվածքներ: Նախատեսված փոքր քանակությամբ A4 ֆորմատի թղթերը պահելու և տեղափոխելու համար:	հատ	75	600	8		8	

17	Կարիչ, մինչև 20 թերթի համար	ցանկացած	Գրասենյակային կարիչ, մինչև 20 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար:	հատ	280	1400	5		5	
18	Կարիչ, 20-50 թերթի համար	ցանկացած	Գրասենյակային կարիչ, առնվազն 20-50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար:	հատ	760	3800	5		5	
19	Ապակարիչ	ցանկացած	Գրասենյակային ապակարիչ՝ N10, N24, N26 և N26.6 մետաղալարե կապերով ամրացված թերթերը առանձնացնելլու համար:	հատ	99	2376	24		24	
20	Նամակի ծրար A5 ձևաչափի	ցանկացած	A5 ձևաչափի թղթից պատրաստված ուղղանկյունաձև պատյան, նախատեսված նամակների,թղթերի, հարթ իրերի պահպանման, տեղափոխման համար, որը փակվում է կպչուն կամ ինքնասոսնձվող իր կողմերից մեկի երկարությամբ տեղադրված կափույրով, գույնը սպիտակ, առանց պատուհանի:	հատ	18	9000	500		500	
21	Թուղթ նշումների համար, սոսնձվածքով	ցանկացած	Թերթիկներ նշումների համար գունավոր, կպչուն, մինչև 76 x 76 մմ չափի, առնվազն 100 հատ թերթերով, տրցակներով:	հատ	59	2832	48		48	
22	Թուղթ նշումների համար, տրցակներով	ցանկացած	Թերթիկներ նշումների համար սպիտակությունը 75%-ից ոչ պակաս, առնվազն 9 x 9 սմ չափի, մինչև 500 հատ թերթերով, տրցակներով, առանձ սոսնձվածքի:	հատ	600	6000	10		10	
23	Դատարկ սկավառակ, առանց տուփի, DVD	ցանկացած	Դատարկ սկավառակ, առանց տուփի, DVD-R, առնվազն 4,7 Gb	հատ	65	45500	700		700	
24	Մարտկոց, AAA տեսակի	ցանկացած	Նախատեսված տարբեր տեսակի էլեկտրական սարքավորումների համար, AAA ալկալիական:	հատ	105	1260	12		12	
25	Մարտկոց, AA տեսակի	ցանկացած	Նախատեսված տարբեր տեսակի էլեկտրական սարքավորումների համար, AA ալկալիական:	հատ	120	1440	12		12	
26	Տեսակավորման դարակաշարեր	ցանկացած	Մետաղյա, ուղղահայաց թղթադիր-դարակներ՝ նախատեսված A4 ֆորմատի	հատ	1200	4800	4		4	

			թղթերի, գրքերի, թղթապանակների, արագակարերի, մատյանների տեսակավորման համար, առնվազն 1 բաժին:							
27	Գրասենյակային դանակ մեծ	ցանկացած	Դանակ գրասենյակային, առնվազն 18մմ x 8 սմ չափի, պատյանը պլաստիկ՝ ձեռքը ֆիքսող ռետինե փաթույթով, ծայրոցը մետաղական:	հատ	350	1750	5		5	
28	Գրասենյակային դանակ փոքր	ցանկացած	Դանակ գրասենյակային, առնվազն 9մմ x 60 մմ չափի, պատյանը և ծայրոցը պլաստիկ:	հատ	60	300	5		5	
29	Ամրակ, միջին	ցանկացած	Գրասենյակային ամրակներ, մետաղական, առնվազն 50 մմ չափի՝ թղթի դարսը լիարժեք ամրության միասնական պահելու կարողությամբ, տուփում առնվազն 100 հատ:	տուփ	190	6840	36		36	
30	Ամրակ փոքր	ցանկացած	Գրասենյակային ամրակներ մետաղական, առնվազն 33 մմ չափի՝ թղթի դարսը լիարժեք ամրության միասնական պահելու կարողությամբ, տուփում առնվազն 100 հատ:	տուփ	85	5950	70		70	
31	Սեղմակ փոքր	ցանկացած	Մետաղյա սեղմակ, առնվազն 19մմ չափի՝ մինչև 40-60 թերթերի ամրացման համար:	հատ	6	864	144		144	
32	Սեղմակ միջին	ցանկացած	Մետաղյա սեղմակ, առնվազն 25մմ չափի, մինչև 60-90 թերթերի ամրացման համար:	հատ	8	1248	156		156	
33	Սեղմակ մեծ	ցանկացած	Մետաղյա սեղմակ, առնվազն 51մմ չափի, մինչև 150-200 թերթերի ամրացման համար:	հատ	36	720	20		20	
34	Գրչատուփ	ցանկացած	Մետաղյա, ցանցապատ տարաներ գրիչների, մատիտների համար նախատեսված, ուղղանկյուն կամ գլանաձև՝ առնվազն 9x7,5 սմ չափերի:	հատ	150	1500	10		10	

** Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում:*

*** Եթե ընտրված մասնակցի հայտով ներկայացվել է մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշան, ֆիրմային անվանում և մոդել ունեցող ապրանքներ, ապա դրանցից բավարար գնահատվածները ներառվում են սույն հավելվածում: Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մոդելի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում*

հրմային անվանումը, մոդելը և արտադրողի անվանումը» սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից համապատասխանության սերտիֆիկատ:
վում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկը սահմանվում է օրացուցային օրերով՝ հաշվարկն իրականացնելով ֆինանսական միջոցներ մերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից :

ԳՆՈՐԴ

Մրցակցության և սպառողների շահերի
պաշտպանության հանձնաժողով
Հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծ 4
ՀՀ ՖՆ Կենտրոնական գանձապետարան
գործառնական վարչություն
Հ/Հ 900011566057
ՀՎՀՀ 01538354
Ա. Վահանյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոմուս» ՍՊԸ
ք. Երևան, Մ. Ավետիսյան 3, 2շ, բն. 7
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570032821248200
ՀՎՀՀ 01078629

Բ. Սարգսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
30.8.2026թ. կնքված
ՄՄՇՊՀ-ՄԱԱՊՁԲ-26/21 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Ընդամենը
2	30192121/1	Գրիչ, գնդիկավոր	... %	... %	1299	2923	2923	2923	4547	4547	4547	6496	6496	6496	6496
3	30192130/1	Մատիտներ	... %	... %	182	410	410	410	638	638	638	912	912	912	912
4	30192133/1	Սրիչներ	... %	... %	29	65	65	65	102	102	102	145	145	145	145
5	30192160/1	Շտրիխ	... %	... %	297	668	668	668	1040	1040	1040	1485	1485	1485	1485
6	30192160/2	Շտրիխ ժապավենային	... %	... %	960	2160	2160	2160	3360	3360	3360	4800	4800	4800	4800
7	30192710/1	Սոսնձամատիտ, գրասենյակային	... %	... %	1500	3375	3375	3375	5250	5250	5250	7500	7500	7500	7500
8	30192720/1	Գծանշիչ	... %	... %	690	1553	1553	1553	2415	2415	2415	3450	3450	3450	3450
9	30192780/1	Էջաբաժանիչ	... %	... %	130	293	293	293	455	455	455	650	650	650	650
11	30197111/1	Կարիչի մետաղալարե կապեր, փոքր	... %	... %	78	176	176	176	273	273	273	390	390	390	390
12	30197112/1	Կարիչի մետաղալարե կապեր, միջին	... %	... %	156	351	351	351	546	546	546	780	780	780	780
13	30197231/1	Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	... %	... %	2280	5130	5130	5130	7980	7980	7980	11400	11400	11400	11400
14	30197232/1	Թղթապանակ, արագակար, թղթյա	... %	... %	7190	16178	16178	16178	25165	25165	25165	35950	35950	35950	35950

15	30197234/1	Թղթապանակ կոշտ կազմով	... %	... %	2064	4644	4644	4644	7224	7224	7224	10320	10320	10320	10320
16	30197235/1	Թղթապանակ ամրակով	... %	... %	120	270	270	270	420	420	420	600	600	600	600
17	30197321/1	Կարիչ, մինչև 20 թերթի համար	... %	... %	280	630	630	630	980	980	980	1400	1400	1400	1400
18	30197322/1	Կարիչ, 20-50 թերթի համար	... %	... %	760	1710	1710	1710	2660	2660	2660	3800	3800	3800	3800
19	30197340/1	Ապակարիչ	... %	... %	475	1069	1069	1069	1663	1663	1663	2376	2376	2376	2376
20	30199230/1	Նամակի ծրար A5 ձևաչափի	... %	... %	1800	4050	4050	4050	6300	6300	6300	9000	9000	9000	9000
21	30199420/1	Թուղթ նշումների համար, սոսնձվածքով	... %	... %	566	1274	1274	1274	1982	1982	1982	2832	2832	2832	2832
22	30199431/1	Թուղթ նշումների համար, տրցակներով	... %	... %	1200	2700	2700	2700	4200	4200	4200	6000	6000	6000	6000
23	30234400/1	Դատարկ սկավառակ, առանց տուփի, DVD	... %	... %	9100	20475	20475	20475	31850	31850	31850	45500	45500	45500	45500
24	31441000/1	Մարտկոց, AAA տեսակի	... %	... %	252	567	567	567	882	882	882	1260	1260	1260	1260
25	31442000/1	Մարտկոց, AA տեսակի	... %	... %	288	648	648	648	1008	1008	1008	1440	1440	1440	1440
26	39132200/1	Տեսակավորման դարակաշարեր	... %	... %	960	2160	2160	2160	3360	3360	3360	4800	4800	4800	4800
27	39241141/1	Գրասենյակային դանակ մեծ	... %	... %	350	788	788	788	1225	1225	1225	1750	1750	1750	1750
28	39241141/2	Գրասենյակային դանակ փոքր	... %	... %	60	135	135	135	210	210	210	300	300	300	300
29	39263400/1	Ամրակ, միջին	... %	... %	1368	3078	3078	3078	4788	4788	4788	6840	6840	6840	6840
30	39263410/1	Ամրակ փոքր	... %	... %	1190	2678	2678	2678	4165	4165	4165	5950	5950	5950	5950
31	39263510/1	Սեղմակ փոքր	... %	... %	173	389	389	389	605	605	605	864	864	864	864

32	39263520/1	Սեղմակ միջին	... %	... %	250	562	562	562	874	874	874	1248	1248	1248	1248
33	39263530/1	Սեղմակ մեծ	... %	... %	144	324	324	324	504	504	504	720	720	720	720
34	39263600/1	Գրչատուփ	... %	... %	300	675	675	675	1050	1050	1050	1500	1500	1500	1500

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ
Մրցակցության և սպառողների շահերի
պաշտպանության հանձնաժողով
Հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծ 4
ՀՀ ՖՆ Կենտրոնական գանձապետարան
գործառնական վարչություն
Հ/Հ 900011566057
ՀՎՀՀ 01538354
Ա. Վահանյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Կոմուս» ՍՊԸ
ք. Երևան, Մ. Ավետիսյան 3, 2շ, բն. 7
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570032821248200
ՀՎՀՀ 01078629

Բ. Սարգսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

30 մայիս

Հավելված N 3
2026թ. կնքված
ՄՄՇՊՀ-ՄԱԱՊՁԲ-26/21 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1

30 Նոյեմբեր 2026թ. կնքված
ՄՄՇՊՀ-ՄԱԱՊՁԲ-26/21 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն